ԽՍՀՄ ՄԱՏԺՈՂԿՈՄԱՏ

ԾԽԱԽՈՏԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾԽԱԽՈՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՓՈՐՁԱԿԱՅԱՆ

ԾԽԱԽՈՏԻ ՇԻԹԻԼՈՒՄԸ

ԾԽԱԽՈՏԱԳՈՐԾԻ
ԹԵՐԹԻԿ № 6

ՀԱՄՀ – ԲՈՐԴ

ՅԵՐԵՎԱՆ 1933

14 MAR

ԳՅՈՒՂՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ՏԻՐԱԺ 1000
ԳԼԱՎԼԻՏ 9211
ՊԱՏՎԵՐ 80

633.
Ծ-64
04 AUG 2010

ԲԱՅԼՇԵՎԻԿՅԱՆ, ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ՏԵՄՊԵՐՈՎ ԼԾՎԵՆՔ ՇԻԹԻԼՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՊԼԼԱՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆԸ

ՇԻԹԻԼՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՊԱՅՔԱՐԵԼ ՎՈՐԱԿԱԿԱՆ ՈՒ ՔԱՆԱԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՐ—ՆՇԱՆԱԿՈՒՄ Է ՊԱՅՔԱՐԵԼ ԲԱՐՁՐ ԲԵՐՔԻ ՀԱՄԱՐ

Շիթիլումը (սածիլումը) ծխախոտի կուլտուրայի մշակության ամենակարևոր աշխատանքներից մեկն է։ Մեծ մասամբ սրանից է կախված դործի հետագա հաջողությունը, վորովհետև Շիթիլումն իր ժամանակին ու կանոնավոր կատարելը նպաստավոր ազդեցություն է ունենում ծխախոտի մշակության հետագա բոլոր աշխատանքների վրա։

Շիթիլման կամպանիան այն մոմենտներից մեկն է, վոր պահանջում է ուժերի խոշոր լարում։ Այդ աշխատանքն իր ժամանակին կատարելուց և կախված վոչ միայն բերքի չափը, այլև դաշտից քաղած ծխախոտի վորակը։

Շիթիլումը պետք է կատարել նախ թեթև, փխրուն հողերում, վորոնք ավելի շուտ են տաքանում, հետո Շիթիլումը կատարվում է ծանր հողերում։

Ծխախոտի Շիթիլումը բաղկացած է աշխատանքի հետևյալ մոմենտներից։

1. Դաշտի նշանառումները.
2. Վոռոգման ակոսներ հանելը.
3. Շիթիլի ընտրությունը և դաշտ փոխադրելը.
4. Շիթիլելուց առաջ ջրելը.
5. Շիթիլումը։

1. Դաշտը տախտակների բաժանելիս գլխավորը, վորի վրա պիտի ուշադրություն դարձնել, այդ վոռոգման առուների ուղղությունն է, վոր պիտի հարմար լինի կանոնավոր ջրելու համար։ Դրա հետ միասին նշվում են այն ուղիները, վորոնցով հետագայում պիտի փոխադրվի քաղված ծխախոտը և վորոնք պիտի հար-

ժարությունն տան ձիով միջշարքային մշակություն կատարելու համար։

Վոռոգման գլխավոր առուն անց է կացվում դաշտի ամենաբարձր տեղով, իսկ նրանից զանազան ուղղություններով տարվում են յերկրորդական ջրատար արխերը։

2. Այնուհետև, յերկրորդական ջրատար արխերից անց են կացվում ակոսներ, վորոնց մեջ հետո տնկվում են շիթիլները։ Այդ ակոսները պետք է իրարից հավասար հեռավորության վրա լինեն, վորովհետև նրանք հանդիսանալու յեն ծխախոտի շարքերը։ Այդ ակոսները հանդիսանում են միջշարքային տարածությունը, ուստի ակոս քաշելիս պետք է նկատի ունենալ, թե ինչ տեսակի ծխախոտ է շիթիլվելու այդտեղ։ Մանրատերև ծխախոտների համար (Սամսոն, դիկ-կուլաղ) շարքերի միջև յեղած տարածությունը պիտի լինի 60 սմ. իսկ խոշորատերևների համար (Տրապիզոն)—70 սմ.։ Այնտեղ, ուր քաղհանի աշխատանքը մեքենայացման և յենթարկվում ձիու կուլտիվատորի միջոցով, պետք է ակոսներն ավելի յերկար անել, հաշվի առնելով աշխատանքի արտադրողականությունը։ Սակայն ընդհանուր առմամբ ակոսի յերկարությունը կախված է նաև տեղի ու վոռոգման պայմաններից։ Ակոսներին շատ մեծ թեքություն չի տրվում, վորպեսզի ջուրն ավելի լավ բաշխվի բույսերին և ավելի լավ ծծվի հողի մեջ։

3. Շիթիլելու համար շիթիլ ընտրելիս անհրաժեշտ է հետևել, վոր այն միանգամայն պիտանի լինի այդ նպատակին, այսինքն լինի բոլորովին առողջ ու հասունացած։

Շիթիլի հասունությունը վորոշվում է հետևյալ նշաններով. Նա պետք է ունենա 5—6 տերև, չհաշված առաջին յերկու սերմատերևները, յերկարությունը պիտի լինի 6—7 սմ. և կեսից ծռելիս չպիտի կոտրվի։ Պետք է լավ հիշել, վոր բոլորովին առողջ ու հասուն շիթիլը միայն հնարավորություն կտա լավ բերք ստանալու։

Շիթիլը փոխադրվում է դաշտ արկղներով կամ կողովներով, վորոնց մեջ պիտի դարսված լինեն արմատները դեպի ներս և 5 սանտիմետրից վոչ ավելի հաստ շերտով։ Բացի այդ, շիթիլը արկղի կամ կողովի մեջ դարսելիս վրայից ձեռքով չպիտի սղմել։ Դասավորված շիթիլն անմիջապես պիտի փոխադրել դաշտ, սակայն, նախապես արդեն կամ կողովը պիտի ծածկել մի թաց քաթանով, կամ, կանանչ թարմ խոտով կամ վորևե այլ խոնավ բանով, վորպեսզի շիթիլները ապահովված լինեն արևի ճառագայթներից թե դաշտում, մինչև շիթիլելը։

4. Շիթիլելուց անմիջապես առաջ պիտի ջրել այն ակոսները, վորտեղ պիտի շիթիլներ տնկվեն։ Սակայն, յեթե շիթիլը տնկվում է խոնավ հողում, անձրևից անմիջապես հետո, այդ դեպքում կարելի յե տնկել նաև առանց ջրելու։

5. Վոռոգվող ծխախոտագործության պայմաններում ակոսի մեջ ջուր բաց թողնելուց հետո շիթիլը տնկվում է վոչ թե ուղղակի ակոսի հատակին, այլ նրա խոնավացած պատին։ Շիթիլել կարելի յե յերկու ձևով—չիվիով և առանց չիվիի (պարզեցրած շիթիլում)։

Առաջին դեպքում շիթիլումը կատարվում է հետևյալ ձևով. տնկողը ձախ ձեռքով բռնում է շիթիլի տերևներից, միաժամանակ աջ ձեռքում բռնած չիվիով (բիզ) խոնավ հողի մեջ փոս է անում, վորի մեջ է դցում շիթիլը և նույն չիվիով հող է սղմում շիթիլի արմատներին, 2 սանտիմետրաչափ թեքելով նրան դեպի առաջին փոսի հակառակ կողմը։ Այսպիսով առաջացած նոր փոսը նա լցնում է նույն չիվիով կամ ուղղակի մատներով։ Դրանից հետո շիթիլի տակի խոնավ հողի վրա մի քիչ չոր հող է լցվում, վորպեսզի շուտ չչորանա։

Պարզեցրած շիթիլումը, վոր կատարվում է առանց չիվիի, կայանում է նրանում, վոր տնկողը չիվիով փոսեր չի անում, այլ ուղղակի շիթիլի արմատները սեղմում է ակոսի պատին և սովորականի նման ծածկում է հողով։ Յեվ առաջին և յերկրորդ դեպքերում շիթիլը պիտի տնկել այնպես, վոր բույսի վերին ծայրը հողով չծածկվի։

Պարզեցրած շիթիլման դեպքում ավելի քիչ բանվորական ուժ է պահանջում և, վոր գլխավորն է, վորակյալ տնկող չի պահանջվում։ Բացի այդ, այս ձևով տնկված ծխախոտն ավելի լավ է բռնում, վորովհետև այս դեպքում արմատները կամ ցողունը չիվիով ճնշելու վտանգը չկա։ Սակայն, այս ձևով շիթիլելու համար անհրաժեշտ է ունենալ լավ մշակված հող և անհրաժեշտ է, վոր ակոսները խոր հանված լինեն։

Հայաստանի պայմաններում ծխախոտը շիթիլելու նորմալ ժամանակամիջոցը պիտի համարել մայիսի 10-ից մինչև հունիսի 10-ը, իսկ դաշտային գոտում տան որով շուտ։ Որվա մեջ շիթիլելու ամենալավ ժամանակը համարվում են առավոտն ու յերեկոն։ Որվա ամենաշոգ ժամանակից պետք է խուսափել։

Յերեկոյան տնկված շիթիլը գիշերվա ընթացքում կարողանում է մի քիչ ուժի գալ և հետևյալ որը այնքան եվ չի տուժում արևի ճառագայթներից։

Շիթիլելու խորությունը կախված է ծխախոտի տեսակից և հողի հատկություններից։ Տրապիզոն տեսակը, որ մեծ-մեծ տերևներ է ունենում, ավելի արձակ տեղ է պահանջում իր զարգացման համար, Սամսոնը և Դիք-կուլաղը, որպես մանրատերև ծխախոտ, ավելի պակաս տարածություն կարողանում են մնալ։

Տրապիզոն տեսակի ծխախոտի համար պիտանի չէ վոչ հարուստ, ավազախառն ու թեթև հողը։ Այս տեսակը հարուստ սևահողերում ու ջրերի մոտ չպետք է տնկել, որովհետև այս պայմաններում նա աճում է շատ ուժեղ և տալիս է անվորակ ծխախոտ։ Այնտեղ, ուր Տրապիզոնը աճում է կոպիտ, կոշտ, այսինքն՝ ավելի բերրի հողերում կարելի չէ տնկել Դիք-կուլաղ տեսակի ծխախոտը, իսկ Սամսոն տեսակի համար ամենից լավն է թեթև հողը, խճի խառնուրդով, որ հողն ավելի տաք է դարձնում, որի շնորհիվ էլ ստացվում է բարձր վորակի ծխախոտ։

Շարքի մեջ բույսերի միջի տարածությունը պիտի վերցնել 20 սմ., իսկ Տրապիզոն տեսակի նկատմամբ, քաղհանի մեքենայացման դեպքում և տերևների ուժեղ աճման դեպքում կարելի չէ վերցնել 25 սմ.։

Յեթե շիթիլելուց 4—5 որ անցնելուց հետո պարզվի, որ մինչև 10—15 տոկոս չբռնած շիթիլներ կան, պետք է նրանց տեղը նորից տնկել, որի համար պիտի վերցնել ավելի խոշոր շիթիլներ։ Լրացուցիչ շիթիլումը պիտի կատարել առաջին շիթիլումից ամենաուշը 6—8 որ հետո։

Նկատի ունենալով, որ ծխախոտի շիթիլումը բացառապես ձեռքի աշխատանք է պահանջում, այդ պրոցեսը հաջողությամբ ավարտելու համար հատկապես անհրաժեշտ է ճիշտ և ուշադիր դասավորել աշխատող ուժերը, թույլ չտալ շատ խոշոր շիթիլող բրիգադներ կազմակերպել, որովհետև դրանից կստացվի դիմադրկություն և «հավասարություն»։ Շիթիլող խմբերը 10—12 հոգուց ավելի չպիտի լինեն, այն հաշվով, որ 2 տնկողին ընկնի 1 հոգի շիթիլ ցրող, ըստ որում շիթիլ ցրելու գործը կարելի չէ հանձնել անչափահասներին։

ԾԽԱԽՈՏԻ ՇԻԹԻԼՄԱՆԸ ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ՏԵՄՊԵՐ ՀԱՂՈՐԴԵԼ.

Շիթիլման կամպանիան ավարտել ժամանակին, պլանների լրիվ կատարումով, համաձայն ագրոտեխնիկայի բոլոր պահանջների.— Ա.ՀԱ. ԿԱՐԵՎՈՐԸ։

Պատ. խմբագիր՝ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ ԿՈՇԵԼԵՎ

ՀՀ Ազգային գրադարան
NL0282427

18381

633
O·64